ՕԳՆԵԼ մեկական մատիտով

Կալեբ Հ., 10 տարեկան, Գերմանիա

Այդ ամենը սկսվեց, երբ իմ ցիցը փախստականներին օգնելու նախագիծ սկսեց: Ես իսկապես սիրեցի նախագիծը, ուստի ես խնդրեցի մայրիկիս ասել իմ դպրոցի ուսուցչին դրա մասին, իսկ իմ ուսուցիչը կամենում էր ինչ-որ բան անել չորրորդ դասարանի հետ: Նախագծի համար օրինակ ծառայելու նպատակով, քույրս և ես թակում էինք դռները, խնդրելով նվիրատվություններ անել:

Օրը եկավ, երբ նախագիծը պիտի ներկայացվեր չորրորդ դասարանի մնացած մասին: Ես մի քիչ հուզված էի: Ես իրականում խիստ նյարդայնացած էի, բայց լավագույնս կատարեցի իմ պարտականությունը: Ես պատմեցի բոլոր չորրորդ դասարանցիներին, թե մենք ինչ գրենական պիտույքների կարիք ունեինք փախստականների համար: Ես պատմեցի, թե ինչպես էինք մենք այցելել մարդկանց և կոչ արեցի, որ նրանք փորձեին ավելի լավ գործ անել, քան ես՝ փող հավաքելով: Այսօր մենք 100-ից ավելի գրենական պիտույքների հավաքածու ունենք: Մենք դրեցինք տետրեր, մատիտներ և այլ դպրոցական պիտույքներ: Մենք նաև ավելացրինք մի երկտող՝ ասելով. «Բարի գալուստ Գերմանիա»:

Ես և մայրիկս տարանք գրենական պիտույքները փախստականների ճամբար: Ես չէի ասի, որ ճամբարը հաճելի էր, բայց այնտեղ խաղահրապարակ կար և մի տարածք՝ դաս պարապելու համար: Ճամբարին մոտ մի գնացք կար, որն իսկապես աղմկոտ էր և երեխաներն ասացին ինձ, որ դա նման էր Սիրիայով և այլ տեղեր թռչող ինքաթիռների ձայնին: Երեխաների համար միգուցե դա նման էր ռումբերի ձայնին, ովքեր լսել էին դա իրենց հայրենիքում:

Ճամբարում ես հանդիպեցի ինձ հասակակից մի քանի երեխաների, ներառյալ Դանիելին՝ մի հիանալի շախմատ խաղացողի: Ես նրա հետ շախմատ չխաղացի, ինչը շատ վատ էր, որովհետև ես սիրում եմ շախմատ, բայց նրանք հրավիրեցին ինձ սեղանի ֆուտբոլ և պինգ-պոնգ խաղալ: Տղաներն ասացին, որ նրանք կարոտում էին իրենց տները և իսկապես ուզում էին հեռանալ ճամբարից ու նորից դպրոց գնալ:

Սեղանի ֆուտբոլ և պինգ-պոնգ խաղալուց հետո մենք բաժանեցինք գրենական պիտույքները: Ես լավ եմ զգում, որ կարողացա անել ինչ-որ բան երեխաների համար, ովքեր ապրում էին ճամբարներում: ■



ՆԿԱՐԸ՝ ԷԴՈՒԱՐԴ ՍՅՈՏԻ